

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2011 թվականի N 116-Ն

**ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 601 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) պետական գրանցման և պետական հաշվառման վկայականների ընդհանուր տեսքը և ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայականի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի պետական հաշվառման վկայականի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 4-ի «Պետական գրանցման վկայականի ձևերը հաստատելու մասին» N 601 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի մարտի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2011 թ. փետրվարի 24
Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍՔԸ ԵՎ ՁԵՎԸ

Պետական գրանցման և պետական հաշվառման վկայականը (այսուհետ՝ վկայական) հատուկ պաշտպանական շերտ ունեցող և համարակալված A-4 ֆորմատի թուղթ է, որը, մեջտեղից ծալվելով, վերածվում է երկու A-5 ֆորմատի թղթերից բաղկացած գրքուկի: Վկայականի 4 էջերի նախշերտով շրջանակված ուղղանկյունների կենտրոնում Հայաստանի Հանրապետության զինանշանի թույլ գունավորված ֆոնային պատկերն է, ներքին կողմից՝ ձախակողմյան ուղղանկյան ներքևի ձախ մասում, կնիքի տեղը նշված է «Կ.Տ.», աջակողմյան մասի ուղղանկյան վերին մասում՝ ուղղանկյան վերևի կողմից որոշակի հեռավորության վրա, իրար տակ գրված են հերթական ներդիրների համարները, և դրանց դիմաց տեղ է թողնված՝ հերթական ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը նշելու համար: Վկայականի արտաքին կողմի դիմացի էջի ուղղանկյան վերին մասի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանի գունավոր պատկերը, որի տակ հայերեն մեծատառերով գրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ», իսկ ուղղանկյան ներքևի մասում գրված է՝ «ՎԿԱՅԱԿԱՆ»:

Վկայականի արտաքին կողմի հետևի մասի ուղղանկյան ստորին մասում գրված է պաշտպանված շերտով թղթի համարը:

Պետական գրանցումն ավարտվելուց անմիջապես հետո՝ վկայականում գրառման ենթակա տեղեկությունները ծրագրային համակարգի միջոցով ավտոմատ կերպով գեներացվում են, որից հետո տպագրվում՝ հատուկ պաշտպանված շերտով, համարակալված թղթի ներքին կողմի ձախ մասում: Սկզբնական գրանցման և փոփոխությունների գրանցման ժամանակ ներդիրում ներառվող անհրաժեշտ տեղեկությունները ծրագրային համակարգի միջոցով ավտոմատ կերպով գեներացվում են, որից հետո տպագրվում են A-5 ֆորմատով ներդիրի վրա, որը ստանձվում է վկայականի ներքին աջակողմյան հատվածում (վկայականի ձևաթղթի պատկերը կցվում է):

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 116-Ն որոշման

ՁԼ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

1. Իրավաբանական անձի վկայականի ընդհանուր ձևը լրացվում է համաձայն N 1 հավելվածի: Իրավաբանական անձի վկայականի ներքին մասի ձախակողմյան հատվածում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N _____

Իրավաբանական անձի անվանումը _____

(անվանումը, ֆիրմային անվանումը, կազմակերպական
-իրավական ձևը)

Գրանցված է պետական ռեգիստրի _____ կողմից

Պետական գրանցման համարը _____

Պետական գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Իրավաբանական անձի տեսակը _____

Գործունեության ժամկետը՝ մինչև _____

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրությունը)

201 թ.

Կ. Տ.

Իրավաբանական անձի վկայականի ներդիրում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

ՆԵՐԴԻՐ _____

Իրավաբանական անձի պետական գրանցման N _____ վկայականի

Իրավաբանական անձի անվանումը _____

Գտնվելու վայրը _____

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար _____

(անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության (հաշվառման) վայրը)

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը _____

Այլ տեղեկություններ _____

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրությունը)

_____ 201 թ.

Կ. Տ.

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 116-Ն որոշման

Ձև

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ վկայականի ընդհանուր ձևը լրացվում է համաձայն N 1 հավելվածի: Անհատ ձեռնարկատիրոջ վկայականի ներքին մասի ծախսակողմյան հատվածում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայական N _____

Անհատ ձեռնարկատեր _____

_____ (անունը, ազգանունը)

Հաշվառված է պետական ռեգիստրի _____ կողմից

Պետական հաշվառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____


Պետական հաշվառման համարը _____

Սոցիալական քարտի համարը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին:

Լուսանկարը



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրությունը)

201 թ.

Կ. Տ.

Անհատ ձեռնարկատիրոջ վկայականի ներդիրում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

ՆԵՐԴԻՐ _____

Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման N _____ վկայականի

Անունը, ազգանունը _____

Անձնագիրը _____

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրված)

Պետական հաշվառման վայրի հասցեն _____

Բնակության վայրի հասցեն _____

Այլ տեղեկություններ _____

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրությունը)

201 թ.

Կ. Տ.

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 116-Ն որոշման

ՁԼ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ, ՀԻՄՆԱՐԿԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**

1. Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի վկայականի ընդհանուր ձևը լրացվում է համաձայն N 1 հավելվածի: Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի վկայականի ներքին մասի ձախակողմյան հատվածում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի պետական հաշվառման վկայական N _____

(առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի անվանումը)

Հաշվառված է պետական ռեգիստրի _____ կողմից
Հաշվառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
Հաշվառման համարը _____
Ծածկագիրը (կոդը) _____
Հարկ վճարողի հաշվառման համարը _____
Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրությունը)

_____ 201 թ.

Կ. Տ.

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի ներդիրում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

ՆԵՐԴԻՐ _____

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի վկայական

(առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի անվանումը)

Գտնվելու վայրը _____

Հիմնադրի անվանումը _____

Գործադիր մարմնի ղեկավար _____

(անունը, ազգանունը, անձնագրային տվյալները)

Այլ տեղեկություններ _____

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Կ. Տ.

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան



